

8. ՀԱՍԱՆ

Բաղդադի մեջ Իբնի Մուսթաֆա անունով մեկ մարթ կէլնի, որ շատ զանգյին մարթ մ'էր:

Իտոր մեկ տղե մը կէլնի, անուն Հասան էր:

Խոր մեռնելեն վերջ, տղեն կանի ուր սախմանք, հըմեն օր կէրթա կարմնջի վերեն կայնի, մեկ մըսաֆիրըմ կպիրի, որ խաց ուտեն:

Մեկ օր Բաղդադի թակավոր Ալի-Ռեշիդ խեստ ուր վազիրին, կէլնի դավրեշի կըլըղով քյաղքյի մեջ կըֆըռա: Չում իրիկուն կան կուգան, իրիկուն կտառնան էտա կարմնջով, որ պիտի մտնեն քյաղաքյ: Հասան էտա տեղ կէլնի, իտոնց աղաչանքյ կինի, թե. «Էկեքյ էսօր զի խուր էլեք»:

Դավրեշներ իտոր խաթըր չեն կոտրի, կէլնեն կէրթան Հասանին մըսաֆիր կէլնեն:

Խաց կտնեն, Հասան կազեր իփե, փորեր լցե, կպերի տնի վեր սեղնին՝ խեստ անուշ գյինուն:

Կուտեն մեյ դեխից, մեյ դեխից էլ խաբար կուտան, Հասանի վիճակ կխառցուցեն:

Հասան կվերուցի, կասի. - Իսկի պանիմ պակասութեն չունեմ, մենակ թե մեր թաղի խոջեն ինան մեր մուխթարներ մե կպանբասեն, մեզնից կտոր կխանեն, հըմեն գյախ, մեր ծեն խեստ մեյմըկու կուգյա: Ա՜խ, աստվածութեն ինոնց ծեռ, մեյ խատ ուրենց խելքյ պեքի ուրենց գյլեռխ, որ ուրիշներացն էլ խրատ էլներ:

Կուտեն, կխմեն, խացից վերջ, Հասան կասի. - Կիշեր որ շուտ կէլնեքյ, կէրթաքյ, տոներ կոծեքյ, նոր կնացեքյ:

Դավրեշներ կասեն. - Մրկա վի՞ր քուն կտանի, նըստի խաբուր տանքյ:

Հասան կտիսնա, որ չէ, իսոնքյ ուր գյեորա մարթ են, կէլնի կէրթա պոզիկ մէլ գյինի կառնի կուգյա: Կուտրեն, կխմեն: Իտրեն կադախ, մեյ դավրեշ կառնի ուր ծեռ, գյախտիկ ասրար կլյե ինե, կուտա Հասանին:

Կասի. - Հասան, էսա մեյ կադախ մեր խաթրի խամար իմ ծեռնիս առ, խըմի:

Հասան կխմի, թե չէ, կինի վեր քյամկին, ոտկեր կտնգյի դարի վեր:

Մորա, թակավոր Հասանին կուտա վազիրի քյամակ, կառնեն դոռրի, կէրթան ուրենց սարեն:

Կտանեն սարեն, կպառկուցեն թակավրու յաթղի մեչ:

Թակավոր ուր էոդի խառվոդին կասի որ. - Շատ մույաթով են պատիվ որ կուտաս զի, պիտի տաս սա մարթուն:

Ուր մըշակներաց կասի որ, ինոնքյ էլ Հասանին թակավոր դեյի պատվեն:

Ուր վազիրներաց էլ կասի. - Առատուն շո' կուգյաքյ ծեր մաճլիս կնստեքյ, Հասանին կպատվեքյ, ինչխ որ թակավրու, որ իմ խազինեն էլ կխըլսցուցի, ծեն պիտի չխանեքյ:

Առատուն օդաբաշին կառնի կտորըմ քացախ, կպիրի կուտա հասանի քյթին: Ծեն կուտա Հասանին:

Կասի. - Ա՜յ, թակավոր, ապրած կենաս, էլի վեր, նամազի վախթըն ընցավ, վազիրները իկեր են, ժոդվըոտվիր են, քյե կաչկեն:

Հասան աչկեր կպանա թե չէ՝ կտիսնա ի՞նչ, թակավրու էոդեն, զինքյ թակավրու յաթղի մեչ պառկուկ, տըսվերկու խատ խուռնի-խրեդեն աղչիկ սազեր ծեռքյըներ, վեց աղչիկ ուր թակավորական խալվըներ ծեռքյըներ, չորս խոզյի իբրեղ լազյան պոնող՝ կայներ ուր տեմ, որ ինքյ էլնի վեր:

Հասան որ կէլնի վեր, տըսվերկու աղչկըներ կբաշլայեն սազեր զանել, խալավ կխագյուցեն, իբրեղ լազյան պիրողներ կպիրեն, որ լվացվի:

Էն դեխն էլ քյանիմ աղչկըներ, խաղ կասեն, կբոռան. ապրի՞ թակավոր:

Ալ-Ռեշիդ թակավոր գյախտիկ մըտե տեղըմ, Հասանի արածներ թամաշա կանի:

Հասան կնստի մեչ տեղաց, կիրիշկի ըսդեխ, կիրիշկի էնդեխ, կասի. - Յարա՞ք էսա աղորթ ի՞, էրա՞զ ի:

Ծեռքյեր ոտկեր իրար կուտա, էլըմ չ'ավատա:

Խալավ խագյուցողներաց մեկուն կասի. - Մեյ խատ իմ մադ կըծի:

Աղչիյն էլ անխոգյի - անխոգյի ըսկուն կայիմ կկծի Հասանի

մատկեր, որ Հասան մեյ բողզով կբոռա. «Յամա՜ն, աղորթ ի, աղորթ ի, ես թակավոր եմ»:

Ըսկուն կբոռա, որ հըմեն էլ կբաշլայեն ծծղալ:

Խալավ կխագյուցեն, կառնեն կտանեն մոտ վազիրներ: Կէրթա կնստի թակավրու թախթի վերեն: Ժողով կանեն, Հասան կասի. - Իդընքյան թողեքյ, էսօր ուրիշ պան կա:

Կասի. - Մարթ էօրեռխկեքյ, թող էրթա խազինեն պանա, խազնը ոսկի պիրի, տար տուր Իրնի Մուվթաֆի տղի Հասանի մոր:

Էն մեկուն էլ կասի. - Կէրթաս Հասանենց թաղի խոջին ինան իրեքյ մուխթարներաց կպոնես, խոջին խարիր փեստ կզանես, էն մեկելներաց մեյ մըկին՝ իսուն: Խոջին թարսընա կխեծուցես էշ, դալալ կիսկես առաճ, որ բոռա. «Վով որ պամբասանքյ անի, վով որ ուրիշին խաթրին տիպնի, ինոր վերճն էսա յի»:

Թակավրու խազինեն կպանան, խազար ոսկին կուտան Հասանի մոր, մեյն էլ կէրթա խոջին կտփի խեստ մուխթարներաց, կխեծուցի էշ խոջին, դալալն էլ կանչել կուտա:

Տառնան կուգյան:

Մեջլիսից սորա խաց կպատրաստեն, իրեքյ ճանջ կշող խուռնի-խրեղեն աղչիկ մեյ կող, իրեքյ մեկ կող, իրեքյ խատ իսոր պրդյուճ արող, տըսվերկու խատ իսոր չալկի արող, մեյ խատ էլ խուռնի-խրեղեն աղչիկ, Արեգակ անունով իսոր գյինի տվող ի:

Հասան՝ կնստի խաց: Է՜, ինքյ սովրեր էր մըսաֆրի խեստ խաց ուտել, մըկա մենակ չկանա խաց ուտել: Ամր կանի, որ հըմեն էլ գյան նստեն, ուր խեստ խաց ուտեն: Ոչ մին էլ չի գյա: Ինքյն էլ խաց աղտըլեղտ կուտի, կպոծնի: Տիսնա որ մարթ, պան չկա դարբար, կէլնի գյոնդի գյլեռխ կպոնի, կխաղա:

Թակավոր գյախտիկ տեղըմ մտե, թամաշա կանի:

Իրիկուն կպիրեն իսոր եմիշ, խեստ անուշ գյինուն: Հասան կուտի, կխմի, քյեֆ կանի:

Գյինի խմելու գյախ Արեգակ ասրատ կլյի մեչ գյինուն, կուտա Հասանին: Հասան խմելուն պես էլըմ ոտկեր կտնգյի տարիվեր:

Մութ որ կմթնի, թակավոր վազիրին կկանչի, կուտա քյամակ, կասի. - Տար դիր ուրենց տուն, արի:

Առատուն մեր կելնի կուգյա՝ կտիսնա, որ Հասան քըներ ի, չակխե: Ծեն կուտա Հասանին, թե. - Էլի վեր, օր կեսօր ի, ի՞նչ քյընելու գյախ ի:

Հասան որ կակխի, կիրիշկա, կտիսնա որ, ուրենց տան մեչ, կշիվարի կբաշլայի մոր ասել. - Ես Հասան չեմ, ես թակավորն եմ, տյու ինչ՞ըխ կհամարձակես զի Հասան ասել:

Մեր կասի. - Տղա, տյու ծոե՞ր ես, քյո խելքյ թալեր ե՞ս՝ Ի՞նչ

թակավոր, ինչ պան: Որ թակավոր լսի, ի՞նչ պիտի ասի: Էրեյ թակավոր մե խղճաց, խազար ոսկի ճամխեց մե, մեր թաղի մոլին տըվեց տըփել պամբասանքյ անելու խամար: Մընկա որ քյո խաբըրներ լըսի, քյո վիզ կուտա զանել:

- Տո, - կասի, - էտա արոդներ հըմեն էլ ես եմ, ես թակավորն եմ:

Հասան կանի ծեն-ծյու, կճվա, կբոռա: Տըրկըցներ որ կլսեն, կուզյան կպոնեն Հասանին, կուշտըմ կտրըփեն, Հասանի խելքյ կպիրեն գյլեռխ:

Հասան էրդյում կանի, որ էլ մարթ չպերի խետ ուր կիրիկուցի:

Կընցնի մեկ-էրկու ամիս, տիսնա որ ճար չկա, մենակ չկանա մնա, կէլնի կէրթա կայնի էլ ըմ կարմնջի գյլեռխ, մըսաֆիր կաչկի: Կտիսնա, որ էն դիհեն էրկու խատ մուսուլցի բազըրգյան կուգյան (մեկ թակավոր, մեկ ուր վազիր է):

Հասան կճանչընա իսոնց: Կէրթա առաճ, պարեով կուտա, կաղաչի, կպաղատի, կառնի, կպիրի ուր տուն մըսաֆըր:

Իրիկուն խաց կտնեն, անուշ վ'անուշ կերուսկուրներ կպիրեն, քաղցր գյինին կպիրի, կնստեն, կուրեն, կխմեն:

Թակավոր կասի. - Հասան, մեյ խա քյո պատմութեն մե արա:

Հասան կասի. - Էրկու-իրեքյ ամիս առաճ էրկու խա' դավրեշ էկան զի մըսաֆըր: Խազար դիր ասեցի՝ էրթալուն գյախ տըրոներ կոծեքյ, նոր կնստեքյ, ծե էլ կասեմ, կիտե՞ք, տըրոներ կոծեքյ, նոր կընստեքյ, չնեղանաք: Էլ չեմ կիտի, սատանա էր, էկավ մտավ ներս, ի՞նչ էր էկավ, ես էլեր ի թակավոր: Թակավոր էլած օր մեր տուն խազար ոսկի էօրեռխկեցի: Աղորթ էր, մեր թաղի խոջին, մուխթարներուց տտիել տըվի, աղորթ էր, ախըր ի՞նչ ասեմ, իմ գյըլխու էկած ծե ի՞նչ պատմեմ, մընկա հըմեն պան մտես կընստեն, մենակ մեյ խատ աղչիկ ըմ կեր, Արեգակ անունով, որ խուռնի-խրեղեն, ա՜խ, մեկ էն, մեկ էն, էն թող զիկ էլներ, թող աշխար վեր զիկ մութն էլներ:

Թակավոր կվերուցի կասի. - Տյու հոքյ մ'անե, Հասան, աստված քյո սրտի մուրազին քյե կխասուցի:

Կառնի կաղախ ծեռ, ասրար կթալի մեչ, կուտա Հասանին, մեյ-մեյ խատ էլ ուրենց կլցի. - Դե, Հասան, էսա խըմենքյ Արեգակի կենաց:

Կխմեն, Հասան էլ մ'էլ ոտկեր կտնգյի տարիվեր:

Կուտա վազիրի քյամակ, տոներ կկոծեն, կառնեն Հասանին, կտանեն թակավրու քյնած էօդեն, խալըվներ կուտան խանել, պիրեն պառկըցուցեն թակավրու տեղաց մեչ:

Առատուն, էլըմ թակավոր կպատվիրի ուր կիյիդերաց, որ պատիվ տան Հասանին, ինչխ որ ուր:

Առատուն օդաբաշին էլըմ կուգյա, քայախ կուտա Հասանին քըթին, կբոռա. - Թակավոր ապրած, էլի, ջամու վախըթն ընցավ, նամազի վախըթն ընցավ, էլի վեր:

Հասան աչկեր կպանա, կտիսնա, որ էլմ առաճվա տեղ: Էլմ սազ զարկողներ, խալավ պռնողներ, հըմեն էլ ենտեղն են:

- Տեր աստված, - կասի, - էսա մաղտենքյ էրազ ի՞, թե աղորթ ի:

Մեկ աղչըկան կասի. - Արի մեյ խատ իմ ականչ կըծի խենքյ:

Էտա անխոգյի աղչիկ ըսկուն կայիմ կկծի ինոր ականչ, որ բոռալեն տեղից վեր կթըռնի, բաշլայի էօղի մեչ վազել դես-դեն:

Մեյդեհեն էլ կբոռա. - Տեր աստված, էսա էրազ ի՞, թե աղորթ:

Ագավ որ կտադրի, առանց խալավ խայնել գեռնդի գյլեռխ կպռնի, կբոռա, կխաղա:

Թակավոր ուր ծաղըր չկանա պռնի, ուր պախվոց տեղեն կէլնի տյուս, կուգա Հասանի մոտ, կբաշլայի խետ Հասանին շախկաշենլինգյ անել:

Հասան որ կտիսնա թակավրուն, կինի թակավրու ոտ, թե. «Ձիկ էլ ըստեղեն մի ճամխե իմ տուն, զի պախի մո քյե»:

Թակավոր Հասանի խաթըր չկոտրի, կպախի մոտ ինք:

Կընցընի վերեն մեկ-էրկու տարի: Թակավրու մըտեն կէրթա ուր խոստմունքյ, որ Արեգակ պիտի տեր Հասանին:

Ամա՜ն, Արեգակ էլե կրայ-պեոց, ինգյե մեչ Հասանի սըրտին:

Հասանի ճար կկտրի, ճար կթալի թակավրուն: Կասի. - Թե՞ տյու խոստացար Արեգակ զի պիտի տիր, ընչի՞ չես իտա:

Թակավոր որ ուր միտ կիսկի, թե ինքյ Հասանին ըսկուն խոստմունքյ մ'արե, կպիրի Արեգակ փսակի վեր Հասանին: Էրկուիրեքյ խազար ոսկի էլ փարա կուտա: Ճյոկ տու'մ կուտա, որ էրթան ապրեն:

Ամա՜ն, ինչ գյախ որ թակավոր պարապ էլնի, Հասանին կկանչի, խետ այլանմիշ կէլնի:

Տարին չլմնցած, Հասան էտա փսրեքյ հմեն ուտելուց վերճ, խարիր ոսկի ֆըռընչուն տալիքյ կմնա, խարիր՝ աշչուն:

Ֆըռընչին, աշչին կէլնեն կուգյան իտրից փարա ուզելու: Հասանի ճար կկտրի, կնգյան կասի. - Ի՞նչխ անենքյ, որ իսոնց փարեն տանքյ, արի տյու մեռի, ես կէլնեմ կէրթամ թակավրուն կասեմ, թե՝ Արեգակ մեռավ, ախըր թակավոր պամ' փարա կուտա, քյո թաղմելեն սորա կուգյամ, ես կմեռնեմ, տյու էլ կընա թակուհուն ասա՝ Հասան մեռավ, պամ' էլ էն կուտա զի թաղմելեն, պիրենքյ մեր պառքյեր կկոծենքյ:

Կպիրի Արեգական կպառկըցուցի, շորըմ կքաշի իրես, կէլնի

խալվըներ ճընճընելեն, պատոտելեն, ծամեր տյուս տալեն, բոռալեն կէրթա չում թակավրու մոտ:

Բաշլայի թակավրուն գյանգյատ անել, թե. «Տյու Արեգակ քյո խալալ սրտով չտվիր գի, ինոր խամար չքյաշեց մեյ տարի, խողն իտուր վեր գյլխուն, մեռավ»:

Թակավոր որ կլսի, շատ կյավա Արեգական մեռնելու վերեն:

Կէլնի, խազար ոսկի փարա, մեյ ծեռքյ խալավ, ինեն մեյ խա պատանքյ կուտա Հասանին, կասի. «Տար թաղի Արեգակ»:

Հասան կլսոնի, կուգյա:

Ըստրիս ինքյ կմեռնի: Արեգակ կպիրի շոր կքյաշի իրիսի վերեն, կէլնի կէրթա մո թակուհին: Կուլա, ծամեր տյուս կուտա, խալվըներ կճոճի, կինի թակուհու ոտկեր, կասի. «Էս ի՞նչ սև օր էր՝ ես տեսա, շանա ջընել-ջընել Հասան խող տվեց վեր իմ եղնիկ գյլխուս, մեռավ, ես ի՞նչ խող մտնեմ»: Ըսկում կուլա, գյեռվք կասի, չում թակուհուն լայ կպիրի:

Թակուհու սիրտ կյավա, կէլնի խազար լիրա էլ էն կուտա Արեգակին, մեյ ծեռքյ խալավ, մեյ խատ էլ պատանքյ, կասի. «Տար, առոքյ-փառոքյ Հասան խորի»:

Կառնի կտանի:

Թակավոր իրիկուն կուգյա մո թակուհին, տիսնա որ թակուհին շա՛ մռութ ի, լայեր ի: Կասի. - Ի՞նչ անենքյ, հըմենս էլ աստծու առաճն ենքյ, մենքյ էլ օրըմ են ճամխով կէրթանքյ, ինչ որ Արեգակ կնայ: Աստված ուր խոգյին լուսավորի:

- Թակավոր, ի՞նչ Արեգակ, Հասան ի մեռի: Նոր Արեգակ էկավ մո զիկ, ասայ. թե՝ Հասան մեռեր ի, ես էլ խազար ոսկի տվեցի, ծեռքըմ խալվի խեստ պատանքյ մ'էլ էօրեռխկիցի, որ վաղ թաղեն:

Թակավոր կասի. - Ջանըմ, Հասան էկավ մո զիկ, ասայ՝ Արեգակն ի մեռի:

Թակավոր կտիսնա, որ չեն կանա իմնա, թե որն ի մեռե, կէլնի մարթըմ կճամխի:

Հասան որ կտիսնա էնղիհեն մարթ կուգյա, Արեգական կմտուցի պատընքյի մեչ, շոր կքյաշի իրես, կնստի գյլխու վիրն, կուլա:

Մարթ կտիսնա, որ Հասան սաղ ի, նստե Արեգական գյլխու վիրն, կուլա:

Կուգյա թակավրուն, թակուհուն կասի, թե. - Արեգակն ի մեռե, Հասան նստե գյլխու վիրն, կուլեր:

Թակուհին կասի. - Տյու էտա մարթուն սովընրցուցեր ես, որ գյա քյո ուզածի պեսն ասի, որ սուտ չէլնես:

Կկանչի ուր խալայեղներաց մեկին, կէօրեռխկի Հասանի տուն:

Հասան որ կտիսնա, թե թակուհու աղչիյ կուգյա, ինքյ կմտնի

պատանքյ, Արեգակ շոր կքաշի վեր ինոր իրեսին, կնստի գյլխու - վիրն, կուլա:

Աղչիյ կուգյա կտիսնա, որ Հասան ի մեռե: Կէրթա թակավորին, թակուհուն կասի, թե՝ Հասան ի մեռի:

Թակավորու, թակուհու ճար կկտրի, կէլնեն բախս կպոնեն խեր մեյ-մընկու, թե Արեգակն ի մեռե՝ թակուհին տարվի, թե Հասան ի մեռե՝ թակավոր տարվի:

Կէլնեն էրկուս մեյտեղ կէրթան:

Հասան որ կտիսնա, թե թակավոր, թակուհին կուգյան, կէլնեն էրկուսն էլ կմտնեն պատընքյի մեչ, շորեր կքյաշեն իրեսներ, կպառկեն:

Թակավոր, թակուհին կուգյան կկայնեն վեր գյլխընեռաց, քիչըմ կվշվշան:

Թակավոր կասի. - Յարաբ աստված, - կասի, - մեյմ' էլներ ըստեղ, ասեր, թե իսոնցիս ո՞րն ի շոտ մեռե, ես ինոր խաազար ոսկի պիտի տի:

Հասան որ խազար ոսկու ծեն կլսի, յավա՜շըմ պատընքյիս գյլեռխ կխանի տյուս: Կասի. - Թակավոր ապրած, ես եմ շոտ մեռե՜, ե՜ս, խուազար ոսկին զի կխասնի:

Թակավոր, թակուհին՝ համ կվախենան, համ էլ կծծղան Հասանի արածներաց վերեն, կխառնցուցեն Հասանին, թե՝ ընչի՞ ըսնա ատեցիր:

Հասան կասի. - Ապա տյու զի ամսական մեկ էլ չես կապե, քյոտված փարեն էլ խըլըսավ, ֆըռընչին մեյ յանեն, աշչին մեյ յանեն՝ յախես պոներ են, ես էլ ամչըցա գյի քեզնիս փարա ուզի, ըսկընա արի:

Թակավոր ինոր ամսական կկապի, խազար ոսկին էլ կուտա: Կմնան են տեղ, չում ուրենց մախ: